Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի գործող հաստիքակազմը հաստատվել է 2011 թվականին:

Ամբիոնի հիմնական կազմի աշխատակիցներն են՝

1) Ամալյա Սաֆարյան – ամբիոնի պետի պարտականությունների կատարող, ոստիկանության փոխգնդապետ,
2) Մերի Մանուկյան – ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ,
3) Ազատ Բագրատյան – ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր:

Ամբիոնում դասավանդվում են պետահիրավական ոլորտին առնչվող շուրջ 2 տասնյակ առարկաներ, որոնք ներդրված են ակադեմիայի մագիստրատուրայի, իրավագիտության և հեռակա ուսուցման ֆակուլտետների բակալավրիատի, ոստիկանության զորքերի հրամանատարական ֆակուլտետի, քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ու կրթահամալիրի վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետների ուսումնական ծրագրերում: Ամբիոնն ակտիվորեն ներգրավված է գիտական կադրերի պատրաստման աշխատանքներում, մասնակցում է մարդու մարդու իրավունքներին առնչվող տարաբնույթ գիտական միջոցառումների, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների կապակցությամբ տրամադրում է առաջատար կազմակերպության և պաշտոնական ընդդիմախոսի կարծիքներ: Ամբիոնը մասնագիտական կարծիքներ է տրամադրում նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիր ներկայացվող և իր գործունեության ոլորտին առնչվող նորմատիվ և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերությամբ: Պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնն իրականացնում է պետահիրավական առարկաների գիտական խմբակի ընդհանուր ղեկավարումը:

2018-2019 ուստարվա դրությամբ պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնն ունի թվով 17 մագիստրանտներ, որոնցից 4-ը՝ առկա, իսկ 13-ը՝ հեռակա ուսուցման ձևով:

2014-2019 թթ. ընթացքում ամբիոնի կողմից հրատարակվել են շուրջ 5 տասնյակ գիտական հոդվածներ, 5 մենագրություն, 4 ուսումնական ձեռնարկ, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տեղական և արտասահմանյան գիտական միջոցառումների ընթացքում ներկայացվել են շուրջ 1 տասնյակ գիտական զեկույցներ:

2019-2021թթ. ընթացքում ամբիոնի կողմից հրատարակվել են շուրջ 2 տասնյակ գիտական հոդվածներ, 2 մենագրություն, 1 ուսումնական ձեռնարկ, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տեղական և արտասահմանյան գիտական միջոցառումների ընթացքում ներկայացվել են մի շարք գիտական զեկույցներ: